



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

10633

658

7-39







57  
p. 1038



150

---

2002



ԱՌԱՋՆՈՐԳ

ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ

Կ Ա Մ


ՏԱՐԵՐՔ

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆ

Պատմութիւն վաճառականութեան եւ Ուսումնասիրութիւնը վաճառականութեան ամէն ճիւղերուն վրայ. — Առեւտրական Օրէնսգիտութիւն, Աշխարհագրութիւն, Տնտեսագիտութիւն. — Վաճառագիտութիւն: — Թղթակցութիւն Հայ. Տաճկ. Գաղ. եւ Անգլ. լեզուներով. — Արհեստից եւ արհեստական նոր զիւտերու վրայ ծանօթութիւններ. — Առեւտրական, սակարանական եւ պանքայի հաշիւներ եւայլն.



Հասո՛ր Ա. — Տես՛ր Բ.



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

1900



# ՕՏԱՐ ԴՐԱՄԱՏԵՐԻ

ԵՒ

## ՏԵՂԱՅԻ ԿԱԶԱՌԱԿԱՆՔ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐՈՒ ՊԱՅՔԱՐՐ

Տնտեսական բացարձակ օրէնքի մը համաձայն պղտիկ դրամագլուխները միշտ տեղի կուտան մեծերուն:

Վաճառականութիւնն ազատ ըլլալով, մէկը չի՛ կրնար ըսել վաճառականին թէ իր գործառնութիւնները պէտք է չափաւորէ պղտիկ դրամագլխի պէրերուն մնաս չպատճառելու համար: Օրէնքով չի՛ կրնար արգիլուիլ մեծ դրամատէրը, որ իր փոքր մրցակիցները փճացնելու համար անոնց ծախած ապրանքներն ինք մնասով չծախէ եւ հրապարակին տիրելէ ետք զինները չբարձրացնէ: Ասիկա թերեւս զեղծում մ'է, — բայց այնպիսի զեղծում մը, զոր ո՛չ մէկ երկրի օրէնք կրնայ արգիլել կամ պատժել: Այս խնդրոյն մէջ նըկատելի երկու կէտ կայ, 1. — Մեծ դրամատէրք ընդհանրապէս օտարական են, իսկ փոքր դրամատէրք՝ տեղացի, և 2. — Մեծ վաճառականք՝ իրենց դրամագլխին ոյժով՝ կարգ մը ապրանքներու վաճառումը մենաշնորհ դարձուցած են, ինչ որ մեծապէս կը մնասէ տեղական վաճառականութեան: Մեծ դրամագլխի տէր վաճառականք շատ մը առաւելութիւններ կը վայելեն: Ո՛չ միայն իրենց ապրանքները մեծաքանակ եւ հեռեւապէս ածան կը գնեն, այլ նաեւ սեւեռիքներ կազմելով՝ գործարանատէրերու հետ պայմանագրութիւններ կը կնքեն անոնց արտադրած մի ո՛րէ մապրանքն ամբողջութեամբ գնելու համար: Դեռ մոռցուած չէ թէ ֆէսի վաճառականութիւնն ինչպէս անցաւ հզօր սեւեռիքի



մը ձեռքը: Ապակիի վաճառականութիւնն ալ այսօր սեկսի-  
 ֆայի մը ձեռքն է, եւ կ'ըսուի թէ անագի վաճառումն ալ  
 մենաշնորհ ընելու համար սեկսիֆա մը կազմուած է: Այս  
 դրութիւն երկու վնաս ունի, նախ որ սպառողք բարձր գնով  
 կը գնեն եւ յետոյ՝ այդ շահէն տեղացի վաճառականք բնա՛ւ  
 չեն օգտուիր: Ի՞նչ ընել պէտք է մեծ դրամագլուխներու  
 հետ մրցելու համար: — Դարմանը պարզ է: Մեր Ֆէսիվա-  
 ճառականներէն ո՛չ մին կրնայ ինքն իր գլխուն մրցիլ սեկ-  
 սիֆային հետ, սակայ՛ն երբ Պոլսոյ հրապարակին վրայ գտնը-  
 ւած 7—8 վաճառականք իրենց դրամագլուխները միացնեն,  
 ո՛չ միայն յաջողութեամբ կը մրցին, այլ նաև կրնան հրա-  
 պարակէն վանել, վնասել յիշեալ սեկսիֆան: Ինչո՞ւ Ֆէսի  
 վաճառականք Քօնստանտնոյ ընկերութիւն մը չկազմեն իրենց  
 մէջ: Ի՞նչ է պատճառը: Եթէ անկարելի կը նկատեն, կամ  
 գէթ դժուարութիւններ կը գուշակեն, ասիկա կը նշա-  
 նակէ թէ ձեռներէցութեան ոգի չունին կամ անտեսական  
 գիտութեան տարրական օրէնքներուն անգիտակ են բոլո-  
 րովին: Մենաշնորհի ձեւ առած ուրիշ ճիւղեր ալ կան, զոր  
 օրինակ, գանազան կերպասներու եւ քօնաֆիլիի վաճառա-  
 կանութիւնը, որ կարգ մը Գերման յանձնակատարներու  
 ձեռք անցած է այսօր: Մինչեւ որ մեր տեղացի վաճառա-  
 կանք հաւաքական գործողութեան մը օգուտը չըմբռնեն, և  
 ժամանակին պահանջումներուն յարմարիլ չուզեն, դրամ շա-  
 հելիք չունին: Բացարձակ ճշմարտութիւն մ'է ասիկա:

Հ Ա Ր Յ Ո Ւ Մ Ն Ե Ր

5. Դրամատէր մը իր հարստութեան մէկ մասը շահու-  
 դրած է 5%<sub>0</sub> և միւսը՝ 4%<sub>0</sub> տոկոսով և տարին 1240 ֆր.  
 եկամուտ կ'առնէ: Եթէ 4%<sub>0</sub> ով դրամ գումարը 5%<sub>0</sub> ով դնէր  
 և փոխադարձաբար, եկամուտը 40 ֆրանք պիտի աւելնար:  
 Կ'ուզուի գիտնալ թէ 5 և 4%<sub>0</sub> ով տոկոսի դրուած գումար-  
 ները քանիակա՞ն ֆրանք են:

ԳՈՐԳԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԶԱՆԱԶԱՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՄԷՋ

Ո Ւ Ս ՈՒ Մ Ն Ա Ս Ի Ր ՈՒ Թ Ի Ի Ն

Ա.

Պարսկական գորգերն եւ անոնց վրայ պատմական,  
 արհեստական եւ տեղագրական ծանօթութիւններ

Գորդագործութիւնը միակ մեծագոյն արհեստն է այսօր  
 ի Պարսկաստան: Բոլոր մեծ եւ փոքր կեդրոններու մէջ տե-  
 ղացիք այս գործով կ'ըրազին: Պարսկական գորգերն  
 այլազան պէսպիսութիւն մ'ունին իրենց գործուածքով, նը-  
 կարներով եւ բուսական ներկերէ պատրաստուած գոյներով:  
 Այժմ, դժբախտապէս, հանքային գոյներու գործածութիւնը  
 տակաւ կ'ընդհանրանայ հոն, այնպէս որ նոր պատրաստուած  
 գորգերը բնանդիծի [aniline] գոյներուն միայն կը պարտին  
 իրենց փայլունութիւնը:

Պարսկական գորգերը չորս որոշ կարգի կը բաժնուին.

Ա. — Մետաքսէ

Բ. — Բուրդէ

Գ. — Խուրճին

Դ. — Քիլիմ

Ա. — Մետաքսէ գորգերու շինութեան թուականը շատ  
 հին չէ: 17րդ դարուն սկսած է եւ իր է՛ն փայլուն չըջանն  
 եղած է Շահարասի իշխանութեան ատեն: Այս թուականին  
 պատրաստուած գորգերու հազուադիւտ նմոյշներ կան այսօր  
 Եւրոպայի մէջ եւ իրենց ծանրութեամբ ոսկի կ'արժեն: Պարս-  
 կաստանի մէջ իսկ այս հին գորգերէն ամբողջ օրինակ մը



չկայ: Միայն քանի մը կտորներ կը գտնուին Գուսի, Մէ-  
 շէտի, Արտէպիլի եւ ուրիշ քանի մը աղօթատեղիներու մէջ:  
 18րդ դարուն՝ մետաքսէ գորգերու շինութիւնն երեսի վը-  
 րայ թողուեցաւ եւ միայն 1886ին էր որ նոր մղում առաւ:  
 1891ին Քէշանի մէջ այս աշխատութեամբ պարապող միակ  
 գործարան մը կար, ուր չորս գործաւորներ կ'աշխատէին:  
 Այսօր չորս գործարաններ կան, 20—25 գործաւորներով:  
 1892ին Քիրմանի մէջ ալ սկսան մետաքսեայ գորգ շինել,  
 նախնական նիւթին առատութենէն ու ածնութենէն քաջա-  
 լերուելով: Գործածուած մետաքսը շատ հաստ ու կոշտ տե-  
 սակէն է, որ ածան կ'ըլլայ: Ներկելու եւ հիւսելու մէթոտ-  
 ները նոյն են, ինչ որ է բրդէ գորգերու համար, որոնց վը-  
 րայ պիտի խօսինք յետոյ: Սովորական տեսակ մետաքսեայ  
 գորգերու քառակուսի մէդրին դինը 35—70 թումանի մէջն  
 է [830—1160 դրշ.] իսկ լաւ տեսակներունը՝ 100—120 [2376  
 —2850]: Շիրազի եւ Գարէթի մէջ ալ կը շինուին մետաք-  
 սեայ մեծ գորգեր, որք մինչեւ 100—200 ոսկի կ'արժեն:  
 Մետաքսեայ գորգերու տարեկան արտադրութիւնը 3—4  
 տարիէ ի վեր միջին հաշուով 10,000 թումանի կամ 2200 ոս-  
 կի կը հասնի եւ գրէթէ ամբողջութեամբ կ'արտածուի յԵւ-  
 րոպա եւ մանաւանդ ի Պոլիս: Չի կարծուիր թէ այս գորգեր  
 աւելի մեծ յառաջդիմութիւն ստանան, որովհետեւ վերջա-  
 պէս պերճանքի առարկայ մ'են եւ սովորական գործածու-  
 թիւն չունին: Ասիից գատ շուտ կ'աւրուին: Նկարներն ալ  
 շատ անգամ անճաշակօրէն պատրաստուած են, Եւրոպական  
 օրինակներուն նմանիլ ուզելով: Երբեմն կը պատահի որ հիւ-  
 սողները չեն հետելիր հին օրինակներուն, այլ իսկատիպ  
 բան մը շինել կ'ուզեն եւ պոռոտ գոյներու խառնուրդ մը կը  
 ծնին: Մետաքսեայ գորգերու շատերը, ինչպէս ըսինք, բը-  
 նանդիլի գոյներով կը պատրաստուին: Արդ, մանուշակ  
 գոյնը քիչ ատենէն կը ջնջուի եւ գորգերը կ'ստանան ո՛չ թէ  
 հին օրինակներու սքանչելի բաց գոյնը, այլ թափթփած  
 գոյներու խառնուրդ մը, հին տպածոյի կամ հնդկական վար-  
 նոց կերպասի մը երեւոյթն առնելով:

Բ. — Բրդէ գորգերը շատ տեսակ են, առնուազն 30—

40ի չափ, եւ ընդհանրապէս կը կոչուին այն տեղւոյն անու-  
 նով ուր արտադրուած են: Մեծ մասը չեն արտածուիր,  
 այլ տեղւոյ վրայ կը ծախուին: Պարսկաստանի ո՛չ միայն մեծ  
 քաղաքներուն, այլ նաև գիւղակներուն, աւաններուն մէջ  
 անգամ բրդէ գորգ կը պատրաստեն:

Գլխաւորներն են. —

1. Ֆէրահան
2. Քիւրտխտան
3. Քիրման
4. Շիրազ
5. Հէրաթ:
6. Թիւրքմէն
7. Սօրասան

\* \* \* Բուրդը պատրաստելու, հիւսելու եւ ներկելու մէ-  
 թոսները շատ պարզ են եւ հին ատենէ ի վեր փոփոխու-  
 թիւն չեն կրած: Գործանոց [atelier] կամ գործարան [fabrique]  
 չկայ: Մէն մի գիւղացի ինք կը խուզէ իր ոչխարներուն  
 բուրդը, յետոյ տան կիները կը լուան, կ'որոբեն, կը սանտ-  
 րեն, կը ներկեն և կը հիւսեն գայն: Այս պատրաստութիւն-  
 ներն աւարտելէ ետք, գործի կ'սկսին եւ իւրաքանչիւր ըն-  
 տանիք՝ իր աշխատողներուն թիւին համեմատ՝ տարին մէկ  
 կամ մի քանի գորգ կ'արտադրէ:

Բուրդին պատրաստութիւնը. — Լուացուած բուրդին  
 պաթմանը [\*] 6, 7 կամ 8 դրան [\*\*] կ'արժէ, իր տեսա-  
 կին համեմատ: Բուրդը պատրաստելու համար նախ իրար-  
 մէ կը զատեն ու կը դասակարգեն, բարակութեանը համե-  
 մատ: Յետոյ պատու կիները, պղտիկ աղջիկները կամ հո-  
 վիւները կը նստին կ'որոբեն, կծիկ կ'ընեն և կը կարժեն [չիդէ  
 ընել]:

Բուրդին ներկումը. — Այժմ՝ բուրդը պատրաստ է ներ-  
 կուելու: Այս նպատակաւ գործածուած նախնական նիւթերն  
 են. —

[\*] Մէկ պաթմանը 2 քիլօկրամ եւ 760 կրամ է:

[\*\*] Մէկ դրանը 2 1/3 դրուշ է:



1. Նուռի կեղեւ, ուրկէ դեղին, թուխ և սեւ գոյն կ'ելնէ :
2. ձեհրի, որ աղւոր դեղին գոյն մը կուտայ և որուն աղէկ տեսակն Աֆղանստանի մէջ կայ : Պարսկաստանի մէջ եղածն ստորին տեսակէ է :
3. Լեղակ (շիվիս), որ կապոյտ գոյն կուտայ, և Հնդկաստանի ապրանք է :
4. Որբասերեւ, ուրկէ դեղինի զարնող գոյն մը կը հանուի :
5. Տորոն (fkof պոյաք), որ վարդի գոյն կուտայ, և Պարսկաստանի զանազան նահանգներուն մէջ կը մշակուի : Քիբմանի և Եէզաի տորոնն հոշակաւոր է :
6. Որդան կարմիր (երմրզ), որ Եւրոպայէ կը ներածուի :
7. Ասիուր (Carthame) :
8. Քամբեեկնիի փայտ, որ Ամերիկայէն կուգայ :
9. Երկաթի ծմբաս :
10. Լեղ (սապ) որ իբր յարամերձիչ նիւթ կը ծառայէ բնիկ արտադրութիւնէ :
11. Խոզկաղիկն :
12. Մեզ :
13. Բնանեղինի գոյներ :

Մեծ քաղաքներու մէջ բնանեղինի գոյները կը գործածեն կապերաներուն փայլունութիւն տալու և անոնց ինչ ինչ մասերուն երանգն աւելցնելու նպատակաւ, և մանաւանդ բուսական ներկերէն աւելի խնայողական ըլլալուն պատճառաւ : Բնանեղինի գոյները Գերմանիայէ կը ներածուին Կովկասի ճամբով :

\* \* Ինչպէս կը տեսնուի, բուրդը պատրաստելու և ներկելու համար Պարսիկներու գործածած մէթոտն ո՛չ նոր է ոչ զաղտոնի : Եւրոպացիներն ալ այդ մէթոտը կը գործածեն : Բայց ինչէ՞ն է որ Պարսկաստանի գորգերն անվիճելի գերազանցութիւն մ'ունին Արեւմուտքի մէջ հիւսուած գորգերուն վրայ : Պատճառն ա՛յս է որ Պարսիկը, գրէթէ միշտ, աւելի խնամք և ուշադրութիւն կ'ընծայէ իր աշխատութեան քան Եւրոպացին, որ կը ջանայ մեծ քանակութեամբ և կարելի եղածին չափ ածան արտադրել, մինչ Պարսիկը կամաց կամաց կը հիւսէ և գոհ կ'ըլլայ տարին մէկ կամ երկու գորգ լմնցնելով :

Վաստըկած շահը, իր արտին մշակութեան հասոյթին վրայ աւելնալով, կը բաւէ իր ապրուստին : Ասոր համար է որ աճապարանք չունի, բուրդը քանի մը անգամ կը լուայ, արեւին կը չորցնէ և այս գործողութիւնը կը կրկնէ երկու, երեք, չորս անգամ մինչեւ որ կատարելագէտ գոհ ըլլայ ձեռք բերուած արդիւնքէն :

Գործասեղանը շատ տեղեր փայտէ չորս գերաններով կազմուած է և ուղղահայեաց շրջանակի ձեւ ունի : Տեղ տեղ ալ, մանաւանդ վրանարնակներու մէջ, որ պզտիկ գորգեր միայն կը շինեն, գործասեղանն հորիզոնական ձեւով կը դըրուի : Ահա այս շրջանակին վրայ կը պրկեն առէջը, պարսկերէն արիօ, որ կազմուած է բուրդի կամ բամբակի գոյգ և անդոյգ թելերէ, որք զիրար կը խաչածեւեն և իրարմէ բաժնուած են փայտէ ճպտոներով :

Նկարի մասին կրնանք ըսել թէ անկարելի է հանգիստ երկու Պարսկական գորգերու, որք նոյն օրինակի վրայ պատրաստուած ըլլան ճշգիւ : Բոլոր նկարները զուտ պարսկական են և Չինական, Արաբական, Հնդկական կամ Եգիպտական արուեստէն փոխառութիւն ըրած չեն : Պարսկական գորգ մը միշտ կը բաղկանայ չորս մասերէ, որք իրարու ընդօրինակութիւնն են լոկ : Այս քառորդ մասերն Կորիճեկ կը կոչուին, իսկ ամբողջութիւնը՝ Տեքթ : Պարսկաստանի մէջ կարելի է մէկ Տեքթով սենեակ մը կահաւորել այսպէս. — գլխաւոր մասը, որ միանէ կը կոչուի, սենեակին մէջտեղը կը դրուի : Անոր երկու քովերը կը գետեղուին մէկ մէկ ֆեճարե, որք նեղ բայց երկայն են : Սերեկնագը սենեկին վերի ծայրը կը դրուի : Տեքթն դժուար կը ծախուի Եւրոպայի մէջ, զի այն տեղի տուները բնաւ չեն նմանիր պարսկական տուներուն :

Հիւսֆ. — Բացատրելու համար թէ ի՞նչպէս կը հիւսեն գորգը, ենթադրենք թէ երկու գործաւորուհիներ կան գործասեղանի մը առջեւ, միջին լայնութեամբ գորգ մը շինելու համար : Մին աջ եւ միւսը ձախ եզերքէն կ'սկսին երկերկու ձերմակ եւ չորսական կապոյտ թել անցընել առէջին մէջէն, Առաջին գիծն աւարտելուն պէս, առէջը կը խաչածեւեն եւ բուրդը կը սանտրեն : Յետոյ կ'սկսին երկրորդ



գիծն եւ այսպէս շարունակաբար : Այս կերպով օրն հազիւ քանի մը քառակուսի հարիւրամէթը կը շինեն :

[Յաջորդ տետրերու մէջ՝ շարունակութիւնն այս ուսումնասիրութեան ուր պիտի խօսուին նաեւ էնկիւրիի, էրզրումի, Գօնեայի, Իզմիտի, Իյնէպօլուի, Տէտէ աղանի, Զօնկուտարի գորգերուն վրայ, եւ շահեկան տեղեկութիւններ պիտի տրուին Իզմիտի եւ Ուշարի գորգերուն շինութեան եղանակին, ինչպէս նաեւ Կեսարիոյ եւ Սըվազի գորգագործ վաճառականներուն վրայ :]

## ԾՈՎԱՅԻՆ ՎԱՃԱՌԱՎԱՆՈՒԹԻՒՆ ԹՈՒՐԻԻՈՅ

### Ի Ձ Մ Ի Ր

Իզմիր, Կ. Պոլսէ ետքը, Թուրքիոյ ամէնէն բանուկ նաւահանգիստն է եւ ընդարձակ վաճառականութիւն ունի, մաւնաւանդ արտածումի վրայ : Անցեալ տարի հոն այցելած են.

Դրօշ	Առագաստանաւ	Շոգենաւ	Տարողութիւն
Ռուսական		191	374,138
Ֆրանսական		198	313,134
Անգլիական	8	330	311,205
Օսմանեան	3488	964	306,479
Աւստրիական	9	203	248,332
Հելլենական	213	428	171,055
Իտալական	29	75	118,540
Գերմանական		52	70,045
Եգիպտական		71	67,827
Հոլանտական		27	22,944
Պելժիական		11	13,053
Շուէտական		8	8,800
Դանիական		3	3,410
Ռումանական	10		2,285
	3757	2561	2,031,247

Ֆրանսա, ինչպէս կը տեսնուի, պատուաւոր տեղ մը գրաւած է այս առեւտրական շարժման մէջ իր 198 շոգենաւերով եւ 313,134 թօնօ տարողութեամբ որ համագումար տարողութեան աւելի քան 15 % կը կազմէ : Յետոյ կուգան Անգլիա՝ 2000 թօնոյի տարբերութեամբ եւ Թուրքիա՝ 6000 թօնոյի տարբերութեամբ : Աւստրիա 5<sup>րդ</sup> կարգը կը բռնէ : Պէտք է գիտնալ որ այս դասակարգութիւն շատ մտաւոր առնչութիւն մը չունի առեւտրական գործառնութեանց կարեւորութեան հետ : Այսպէս Ռուսք, որ առաջին տեղը կը բռնեն, կարեւոր գործ չեն ընել Իզմիրի մէջ, բայց Աղէքսանդրիոյ դժին յատկացուած իրենց շոգենաւներ, որք Իզմիր ալ կը հանդիպին, մեծ տարողութիւն ունին : Իբր 12 տարի առաջ Իզմիրի նաւահանգստին բերանը շարունակ կը նեղնար, Հէրմոս գետին բերած հողերուն պատճառաւ, որք կ'սպառնային մեծ նաւերուն մուտքն արգելել, ինչ որ այս վաճառաւազ քաղաքին համար անկում մը պիտի ըլլար : Ռուսի հարկ եղաւ գետին ընթացքը փոխել : Օսմ. կայսերական կառավարութիւնն 1890ին սկսաւ աշխատութիւնները, որք յաջորդ տարին աւարտեցան : Այս կարեւոր ձեռնարկութիւնը վարեց Ֆրանսացի Մ. Ա. Ռիվէ որ այն ատեն նահանգին Ա. Երկրաչափն էր : Իզմիրի քարափներն ու նաւահանգիստը շինած են Ֆրանսացի Տիւսօ Եղբարք, որոց աշխատութիւնն աւելի գեղեցկացուց քաղաքին երեւոյթն եւ անոր վաճառականութիւնը մեծապէս դիւրացուց :

Այժմ համառօտ կերպով խօսինք Իզմիրի պատմութեան վրայ որ արդէն շատ երկայն է : — Հին Իզմիր, որ Պուրնապատի հարաւ, արեւմտեան կողմը կը գտնուի, Եփեսոսի բնակիչներուն կողմէ շինուեցաւ Քրիստոսէ 1130 տարի առաջ եւ Իզմիր կոչուեցաւ ի պատիւ Զմիւռնա ամազոնին, որ Եփեսոսն առած էր : Քաղաքն ապա վերաշինուեցաւ Աղէքսանդրի ձեռքով որ երկրաչարժին պատճառած փլաններէն ախրած, Բակոս լեռան վրայ քնացած ատեն, Նէմէսիս դիցուհիէն ներշնչուեցաւ եւ արթննալուն պէս որոշեց նոր քաղաք մը շինել հոն, ուրկէ լսած էր դիցուհւոյն ձայնը : Անդիկոն եւ Լիւսիմաք գործադրեցին Աղէքսանդրի ծրագրերը :



Արդի իզմիր այդ նոր քաղաքին ստորին մասը կը գրաւէ :  
 իզմիրի համար յառաջդիմութեան նոր շրջան մը սկսաւ եւ  
 իր գագաթնակէտին հասաւ Հռովմայեցոց ատեն : Հռովմէ  
 ետք երկրորդը կը համարուէր գիտութեանց եւ արհեստից  
 զարգացուն վիճակին պատճառաւ : Յայտնի է թէ Յիսուսի  
 մայրն ու ամենասիրելի աշակերտն ապաստանարան գտան  
 յ'իզմիր, որ Ասիոյ եօթն եկեղեցիներէն մին յիշուած է  
 Յովհաննու Յայտնութեան մէջ : Առաջին եպիսկոպոսը, Ս. Պո-  
 ղիկարբոս, 166ին մեռաւ տարածամ : Մեռած տեղւոյն վրայ  
 մատուռ մը կայ մինչեւ այսօր : 1423էն ի վեր իզմիր Օսմ.  
 կայսրութեան մաս կը կազմէ եւ անոր հովանիին տակ կը  
 զարգանայ եւ կը յառաջդիմէ, գեղեցիկ քաղաք մը եւ վա-  
 ճառաշահ կեդրոն մը ըլլալով եւ զարմանալի կերպով վերա-  
 կանգնելով միշտ երկրաշարժերէն ու համաճարակներէն որոց  
 ենթարկուեցաւ :

[իզմիրի վաճառականութեան զանազան ճիւղերուն վրայ  
 ուրիշ առթիւ :]

**Ք Ր Ո Ս**

Քիոս կղզին 1200 քառակուսի քիլոմէրը սարածութիւն  
 ունի : Բնակիչք 70,000 հոգի են : Կլիման շատ պատուական  
 է : Խիստ տաքութիւն կամ խիստ ցուրտ անձանօթ են հոն :  
 Զմեռը՝ ջերմաչափը 0էն վար չիջնէր : Ո՛չ երաշտութիւն  
 ունի ո՛չ խոնաւութիւն : Ասոր համար է որ Քիոս՝ հին ատեն՝  
 «չորս երջանիկ կղզիներ»էն մին կը համարուէր : Եթէ քար-  
 տէսին վրայ ակնարկ մը նետենք, կը տեսնենք որ կղզին իր  
 հարաւային եւ հիւսիսային ծայրերուն վրայ աւելի լայն է քան  
 մէջտեղը : Արեւմտեան կողմը ծովածոց մը կայ, զոր Հերոդոտ  
 «Քիոսի խոռոչը» կ'անուանէր : Այս ծովածոցին երկու ծայրերը՝  
 հիւսիսային կողմէն՝ կը վերջանան հրաւանդանով մը որ Ս.  
 Նիկողոսի հրուանդան կը կոչուի եւ կը գտնուի իբրսորա կըզ-  
 զիին դիմացը եւ հարաւային կողմէն ուրիշ հրուանդանով մը  
 որ կը կոչուի Մասդիքոյի հրուանդան : Կղզիին գլխաւոր

արտադրութիւններն են գինի, թարմ եւ չոր պտուղ եւ մազ-  
 տաքէ (mastique, սաքրգ) : Արմատիք շատ չի մշակուիր հո-  
 ղին քարուտ ըլլալուն պատճառաւ : Քիոսի գինին նշանաւոր  
 էր հին ատեն : Կեսար շատ կ'ախորժէր անկէ : Հոմերոս եր-  
 գած է զայն : Հռովմայեցի բժիշկներն իրը դէպ կը պատուի-  
 րէին : Հօրդանիոս մեռած ատեն 10,000 չիշ Քիոսի գինի  
 ունէր : Այժմ Քիոսի գինին այն մեծ համբաւը չունի : Միայն  
 կղզիին բնակիչները կը գնահատեն : Նարինջի, լեմոնի եւ  
 կիտրոնի արտադրութիւնն առատ է ի Քիոս : Գարնան՝  
 նարնջի ծաղիկներու անոյշ հոտն հեռուէն կ'առնուի : Այս  
 նարնջենիներու պարտէզները կամարթինի սքանչացման ա-  
 ռարկայ եղած են : Քիոս կ'արտադրէ նաեւ պատուական նուշ,  
 թուզ եւ ուրիշ պտուղներ : Վերջապէս կ'արտադրէ մազտաքէ,  
 որ տեսակ մը սեփին է եւ կը հանուի pistacia lenticusէն :  
 Կոճղին վրայէն առնուածը արցունքի ձեւ մազտաքէն է, իսկ  
 դետնէն հաւաքուածը՝ սովորական մազտաքէն : Ակուայի տակ  
 կը կախուղնայ, խունկի համ կ'առնէ եւ անուշ հոտ մ'ունի :  
 Արեւելքի կիները կը ծամեն զայն շունչերնին անուշահոտե-  
 լու համար : Բայց կ'երեւի թէ ակուաներու գեղեցկութեան  
 կը մնասէ : Մազտաքէն ատենօք բժշկութեան մէջ կը գոր-  
 ծածուէր : Հիմա ընդհանրապէս կը գործածուի անուշահոտե-  
 լու համար օղին որ մասսիւա կը կոչուի : Քիոսի օղին ատե-  
 նօք մեծ համբաւ ունէր, որ երթալով կ'իյնայ, ալքօլ շատ  
 խառնուելուն համար : Քիոսի մազտաքէին տարեկան արտա-  
 ծումն է մօտ 100,000 քիլօկրամ : Կաքաները (եֆլիֆ) խիստ  
 շատ են Քիոսի մէջ : Կղզին ունի մարմարի ու ծարրաքարի  
 սքանչելի հանքեր : Շերամարուծութիւն ալ կայ եւ մետաքսէ  
 հիւսուածներու ճարտարարուեստը խիստ ծաղկեալ էր ժա-  
 մանակաւ : Քիոս շատ անուններ ունեցած է : Առաջ կը կոչ-  
 ուէր Օֆիինիոս, օձերու կղզի, որովհետեւ օձ շատ կար : Յե-  
 տոյ Քիոն դիցուհիին անունով Քիոս կոչուեցաւ : Գիցուհին  
 օձերէն ազատեց կղզին : Ըտողներ կան թէ Քիոնի որդւոյն  
 ծննդեան ատեն ձիւն դալուն պատճառաւ այնպէս կոչուած  
 է : Յունարէն ձիւնին կ'ըսեն կիոն :




# Գ Ի Ի Տ Ե Ի

## ՀԱՇՈՒԱԳԷՏ ՄԵՔԵՆԱՅ

Պ. Պ. Հաշուակալներուն աչքը լոյս: Երկաթէ մրցակից մը ելաւ դիմացնին:— Հաշուագէտ մեքենան անսովոր արագութեամբ և բացարձակ ճշտութեամբ կը կատարէ յաւելում, բարձում, բազմապատկութիւն, բաժանում և քառակուսի արմատ կը գտնէ: Մեքենան դրուած է տուփի մը մէջ: Աջ կողմը կոթ մը կայ որ երկու դի ալ կը դառնայ: Տուփին վրայ աղիւսակ մը կը գտնուի ինն փողածեւ փորուածքներու մէջ, վարի ծայրերը թուագրուած և ամէնուն մէջ ալ, վերէն վար, ինն թիւերը գրուած: Ամէնէն վերի կարգը, որ այս փորուածքներուն մէջ շարժող ինն լծակներուն դադարի տեղն է, Օներ կը գտնուին: Տուփին առջև դրուած է շարժուն սայլակ մը, որուն աջ կողմն է արձանագրիչ գործիքը: Ատոր նշանները կ'երեւին 13 մեծ պատուհաններուն մէջ: Զախ կողմը կը գտնուի հաշուող գործիքը, որուն թիւերը կ'երեւին փոքր պատուհաններէն: Դադարի ատեն Օ ներ կը շարունակ թուր պատուհաններուն առջև, իրենց ոչնչութիւնը ցուցադրելով: Եթէ աղիւսակին լծակներէն մին վար իջեցնենք և թիւի մը առջև տանինք, մէջէ մէջ անցած և լծակին ցոյց տալիք թիւին հաւասար ակումներ ունեցող անիւ մը կը դառնայ տուփին մէջ: Դարձուցէք կոթն և անիւը կը տեղափոխուի ու արձանագրիչ գործիքին անիւին մէջ անցնելով, այս վերջնոյն պատուհանէն ձեռ աչքը կը խոթէ աղիւսակին մէջ նշանակուած թիւը: Այս շարժումը միեւնոյն ատեն կը կատարուի նաև հաշուող գործիքին մէջ: Պատուհաններուն մէջ զերօներ շարելու համար կը բաւէ երկու ծայրի բանալիները դարձնել: Ինչ գործողութիւն ալ ընէք, միշտ հարկ է չորս շարժում կատարել մեքենային վրայ, 1. լծակները տեղաւորել, աղիւսակին մէջ գրելու համար, 2. կոթը դարձնել, յաւելում, բարձում եւլն. ընելու համար, 3. Սայլակն աջ կամ ձախ տանիլ, գործո-

ղութիւնն ամբողջացնելու համար և 4. ծայրի բանալիները դարձնել, հաշուող և արձանագրող գործիքներուն պատու-



Հաշուագէտ Մեքենայ


հաններուն մէջ զերօներ շարելու համար: Պատկերը կը ներկայացնէ կատարուած բազմապատկութիւն մը, — 435,072ը 6,254ին հետ: Տեսէք ինչպէս եղած է.— նախ բազմապատ-



կելի 435,072 թիւն աղիւսակին մէջ արձանագրուած է լծակներուն միջոցաւ: Յետոյ կոթը չորս անգամ դարձուած է [որովհետեւ բազմապատկիչին միաւորը 4 է] 435,072ի բազմապատկութեան արդիւնքն ստանալու համար բազմապատկիչին միաւորին հետ: Յետոյ սայլակը մէկ կեռիք (ֆերթիկ) դէպ ի աջ քշուած եւ կոթն 5 անգամ դարձուած է բազմապատկիչին արդիւնքն ստանալու համար բազմապատկիչին ստանաւորին հետ, նախապէս ստացուած արդիւնքին վրայ աւելնալով: Նորէն սայլակը մէկ կեռիք առաջ տարուած եւ կոթն երկու անգամ դարձուած է հարիւրաւոր թիւին համար, եւ յետոյ նոյն գործողութիւնը կրկնուած և կոթը 6 անգամ դարձուած է հազարաւորին համար: Փնտուած արդիւնքը, 2,720,940,288 երեւցած է, արձանագրիչ գործիքին պատուհաններուն մէջ, երբ միեւնոյն պահուն ամբողջ բազմապատկիչն ալ, 6254, հաշուող գործիքին պատուհաններուն առջեւ եկած, ձեր գոհունակութեան ժպտին կ'սպասէ: Փորձը ներու կամ ճշտելու հարկ չկայ, որովհետեւ այս երկաթեայ հաշուակալը, միսէ ու ոսկորէ շինուած հաշուակալներուն չի նմանիր: Սխալիլ կամ շփոթիլ չի գիտեր: Գործողութիւնն հազիւ կէս վայրկեան կը տեւէ: Բառակուսի արմատներ գտնելու գործողութիւնն հիմնուած է խիստ պարզ մէթոտի մը վրայ, որուն համեմատ թիւի մը քառակուսին հաւասար է նոյն թիւին չափ յաջորդական անդոյգ թիւերու գումարին: Չոր օր. 49, որ 7ին քառակուսին է, հաւասար է

$$1+3+5+7+9+11+13$$

այսինքն առաջին 7 անդոյգ թիւերու գումարին: — Այս օգտակար մեքենային գործածութեան եղանակը քանի մը վայրկենի մէջ կարելի է սովորիլ: Մէկ երկու ժամու վարժութենէ ետքը, մարդ կրնայ այս մեքենայով հաշուել ամենաճարտար հաշուակալէ մը չորս անգամ աւելի արագ և առանց յոգնութեան, կը բաւէ որ պարզ թիւ գրել գիտնայ: Բաժանման գործողութեան մէջ քանորդն ու մնացորդը ճշտապէս ցոյց տալով, այս երկաթեայ հաշուակալ կոշուած է մեծ ծառայութիւն մատուցանել վաճառականներուն, դրամատէրներուն:



## ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՕՐԷՆՍՊԻՏՈՒԹԻՒՆ

Թէ ի՞նչ պէտք է ընել

Անվնար մուրհակներու նկատմամբ

Այս անգամ պիտի գրենք սա կարեւոր խնդրոյն վրայ թէ օրէնքն ի՞նչ կը տրամադրէ պայմանաժամը լրացած անվնար փոխանակագրերուն և ի հրամանի մուրհակներուն նկատմամբ և թէ ի՞նչպէս պէտք է բրօքսթօ ընել անոնց դէմ: Այս խնդիր շատ կարեւոր է, մանաւանդ մեր երկրին ժողովրդեան համար որ ըստ մեծի մասին անտեղեակ է օրէնսգիտական սկզբունքներու: Ուրեմն գործնական կերպով մը թուենք բոլոր այն ձեւակերպութիւնները զորս փոխանակագրի մը տէրը պարտաւոր է ընել: Փոքրիկ զանցառութիւն մը կրնայ իր բոլոր իրաւունքներէն զրկել զինք:

Երբ փոխանակագրի մը պայմանաժամը լրանայ (1), փոխանակագիրն ի ձեռին ունեցող անձը, այսինքն տէրը (նա՛միլ) պէտք է 1. փոխանակագիրը որո՛ւն վրայ որ քաշուած է (մուխաքապ) անոր գիժելով ստակը պահանջէ. եթէ ստակն առնէ, փոխանակագիրն ստորագրելով անոր կը ձգէ, իսկ

[1] Փոխանակագրի մը պայմանաժամն հինգ կերպով կարելի է որոշել, 1. Ի տեսութեան վճարելի [ավիտրա, խպրագրնոտ], — այս կարգի փոխանակագիր մը ներկայացուելուն պէս պայմանաժամը լրացած կ'ըլլայ եւ պէտք է անմիջապէս վճարուի. 2. Տեսնուելէն սաչափ օր կամ ամիս վերջը վճարելի. — այս պարագային մէջ փոխանակագրին ընդունուած օրէն, կամ եթէ ընդունուած չէ, բրօքսթօյին թուականէն կը հաշուուի, առանց ընդունուած օրը կամ բրօքսթօյին թուականն ի հաշիւ առնելու. 3. Որոշեալ օր մը, զոր օրինակ Գեկտ 2ին. 4. Թուականէն սաչափ օր կամ ամիս վերջը — այս պարագային մէջ ալ ստորագրուած օրը չի հաշուուիր. 5 Այն ինչ տօնավճառին, — զոր օրինակ Սիլվիբի բանայիլին վճարելի. — այն ատեն ալ եթէ տօնավճառը մէկ օր է, նոյն օրը, իսկ եթէ մէկէ աւելի օր է, վերջընձեր օրը պայմանաժամը լրացած կը համարուի:



եթէ կարելի չըլլայ դանձել, այն ատեն երկրորդ պարտաւորութիւն մը կը ներկայանայ :

2. Փոխանակագրին պայմանաժամը լրանալէն մինչեւ 24 ժամ<sup>(1)</sup> պէտք է նօտարին (մուգավելար մուհարրիին) դիմելով<sup>(2)</sup> բրօքսրոյի ձգել: Մուգավելար մուհարրիին նախ պաշտօնական կերպով (անգամ մ'ալ ինք կը պահանջէ մուրհակին փոխարէնը (այս գործողութեան նօթա կ'ըսուի), եթէ գանձէ բրօքսրոյի հարկ չի մնար, իսկ եթէ բացասական պատասխան առնէ, այն ատեն բրօքսրոյի գործողութեան կը ձեռնարկուի: Թէեւ օրէնքը 24 ժամուան մէջ բրօքսրօ ընել կը տրամադրէ, բայց մուրհակը 24 ժամուան մէջ նօթայի ձգելով, այդ տրամադրութիւնն յարգուած կ'ըլլայ, — կը բաւէ որ 24 ժամուան մէջ դիմում եղած է: — Հոս կարելոր խնդիր մը կը ներկայանայ թէ արդեօք որո՞ւ դէմ պէտք է բրօքսրօ ընել: Անձամբ տեսած եմ որ մեր հրապարակի վաճառականներուն գրէթէ ամենքն ալ, եթէ փոխանակագիր մը անվճար մնալուն համար բրօքսրօ ընել պէտք ըլլայ, միայն ընդունողին դէմ և ի հրամանի մուրհակներն ստորագրողին դէմ բրօքսրօ ընելով իրաւունքնին ապահոված կը կարծեն: Սակայն մեծապէս կը սխալին: Այս խնդիրը լաւ բացատրելու համար նախ ըսենք թէ ինչո՞ւ փոխանակագիր մը բրօքսրօ կ'ընեն: Փոխանակագրի դրութիւնը վաճառականութեան մէջ ամենակարեւոր դեր մը կը խաղայ, որովհետեւ այդ դրութեամբ գումար մը առանց ո՛ր եւ է վտանգի ենթարկուելու՝ տեղէ տեղ կը փոխադրուի և ի հրամանի մուրհակներուն պէս ձեռքէ ձեռք կը շրջաբերի իբրեւ դրամ: Այս պատճառաւ փոխանակագրերն և ի հրամանի մուրհակները՝ սովորական մուրհակներու հետ բաղդատմամբ՝ կարգ մը առանձնաշնորհումներ կը վայելեն: Ասոնցմէ ամէնէն զըլ-

[1] Եթէ հետեւեալ օրը՝ տօնի պատճառաւ՝ պաշտօնատունները փոք ըլլան, զոր օրինակ՝ ուրբաթ կամ երեք օր Պայրամ ըլլայ, այն ատեն շաշաթ կամ Պայրամին աւարտման յաջորդող չորրորդ օրը բրօքսրօ ընելու է:

[2] Առեւտրական Սենեակն ալ [Chambre de Commerce] բրօքսրօյի գործողութիւնը կատարելու ձեռնհաս է:

խաւորը սա է թէ օրէնքը փոխանակագրի մը կամ ի հրամանի մուրհակի մը մէջ ստորագրութիւն ունեցող բոլոր անձերն իրարու երաշխաւոր կը նկատէ, այսինքն եթէ փոխանակագրին տէրը՝ ընդունողին դիմելով՝ ստակը չկրնայ գանձել, անկէ առաջ ստորագրութիւն զնող ամէն մէկուն զատ զատ կամ ամէնուն միասին դիմելով կրնայ դրամը պահանջել: Եւ ահա այս պահանջման իրաւունքը չկորսնցնելու համար օրէնքը կը հրամայէ որ փոխանակագրին տէրը՝ երբ անվճար մնացած փոխանակագիրը բրօքսրօ ընէ՝ պարտաւոր է այդ բրօքսրօն հաղորդել փոխանակագրին մէջ ստորագրութիւն ունեցողներուն, կամ որու որ դիմում ընել ուզէ անոր, որով եթէ մէկը միայն ընդունողին դէմ բրօքսրօ ընելով միւսներուն չհաղորդէ, անոնք երաշխաւորութենէ կ'ազատին: Այլ անոնցմէ դրամ չի կրնար պահանջուիլ: Այս պարագային մէջ բրօքսրօն աւելորդ ծախք մը եղած կ'ըլլայ, որովհետեւ արդէն առանց բրօքսրօյի ալ կարելի է ընդունողէն կամ ի հրամանի մուրհակներն ստորագրողներէն պահանջել: Ուրեմն բրօքսրօն պէտք է հաղորդել նաեւ այն անձին, ուրկէ փոխարէնը պիտի պահանջուի:

ՏԻՐԱՆ ԵՐԿԱՆՆԱՆ

(Մնացեալն յաջորդ սեփով)



Հ Ա Ր Ց Ո Ւ Մ Ն Ե Ր

6. Սնանկ վաճառական մը 31% միայն կրնայ վճարել իր պարտապահանջներուն: Եթէ 217.40 Օսմ. ոսկի աւելի ունենար, պարտքին 477ը վճարած պիտի ըլլար: Ի՞նչ է գայքը և ի՞նչ է պարտքը:

7. Մէկ մէկը մետաքսեղէն սպրանք մը Լիոնի մէջ կ'արժէ 5 ֆր.: Լոնտոնի մէջ եարտան քանի՞ րէնա կ'ընէ, գիտնալով թէ 1 անգղիական ոսկին 25.18 ֆր. է եւ 1 եարտան 91 սանթիմ:





Մանչեսթըր, 24 Հոկտ. 1900

Բ. Էֆէնտի

Կ. Պոլիս

Ըստ հրամանի ձեր 14 թուակիր նամակին, 167 տուզինա փողկապ զրկեցի Պոլիս եւ ներփակ հաշուեցոյցին գումարը, £ 91.17, ձեր հաշուոյն անցուցի:

Սպասելով նոր հրամաններու, յարգանքներս կը մատուցանեմ:

Ա.

Մանչեսթըր, 14 Հոկտ. 1900

Բ. Էֆէնտի

Տերի սաստէք

Մահը հալին 14 թարիխու մէքթուպունուզլա լութֆէն սիփարըզ օրունան 167 տուզինա քրավաթը թարաֆընըզա իրսալ վէ մէրպութ ֆաթուրա մուճիպինճէ 91.17 ինկիլիզ լիւրասընա պալիզ օլան եէքիւնի հիսապընըզա գայա իթտիմ:

Եէնի սիփարըզաթընըզա ինթիզարլէ արզը միւվալաթ իտէրիմ:

Ա.

Manchester, le 24 Oct. 1900

Monsieur B.

Cons/ple

En execution de l'ordre contenu dans votre lettre du 14 court., j'ai expédié à Cons/ple 167 douzaines de cravates.

Ci-joint la facture montant à £ 91. 17 à votre débit.

Je suis toujours à vos ordres, et vous prie d'agréer mes considérations respectueuses.

A.

Manchester 24<sup>th</sup> Oct. 1900

Mr. B.

Cons/ple

Sir

In execution of the order contained in your letter of the 14<sup>th</sup> inst. I have forwarded 167 dozens of ties to Cons/ple.

Inclosed is invoice amounting to £ 91. 17 to your debit.

Recommending myself to you for your future orders, I remain respectfully yours.

A.



Cons/ple, le 13 Decembre 1900

Monsieur

J'ai appris que vous désiriez engager un commis bien au courant de votre genre d'affaires et capable de tenir la correspondance en français et en allemand.

Croyant être en mesure de remplir ces conditions, je prends la liberté de vous offrir mes services, pour le cas où l'emploi serait encore vacant.

MM. Runzler & Cie de notre ville, chez qui je suis employé depuis plusieurs années, vous donneront sur moi tous les renseignements dont vous pourrez avoir besoin; et j'ose vous assurer, Monsieur, que si vous m'honoriez de votre confiance, tous mes efforts tendraient à la justifier par mon exactitude et mon zèle.

Dans l'attente d'une réponse favorable, je suis avec respect, Monsieur, votre très humble et très obéissant serviteur,

A. B.

Cons/ple, le 20 Dec. 1900

Monsieur

Nous avons le regret de ne pouvoir profiter de vos offres de service, l'emploi dans nos bureaux auquel vous faites allusion ayant cessé depuis plusieurs jours d'être vacant.

Agréez, Monsieur, mes salutations distinguées.

C. D

Այս նամակներուն հայերէն եւ թուրքերէն [թուրք գր-  
րերով] թարգմանութիւնները՝ յաջորդ տեսրին մէջ:

Cons/ple 13th Dec. 1900

Sir

I have heard that you are desirous of engaging a clerk who besides having a general knowledge of your branch of business is capable of corresponding in French and German.

Feeling myself competent to fulfil these conditions, I take the liberty of offering my services, should the situation still be vacant.

Messrs. Runzler & Cie of this place, in whose house I have been engaged for several years, will be good enough to give you satisfactory information respecting me, and I venture to assure you, Sir, that if you honour me with your confidence, no efforts shall be spared on my part to justify your good opinion.

Trusting to receive a favourable reply, I am, Sir, your obedient humble servant,

A. B.

Cons/ple, 20th Dec. 1900

Gentlman

We regret not being able to take advantage of your offer, the situation alluded to by you in your letter, having been already occupied several days.

Yours faithfully,

C. D.



ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի Տ Ա Լ Ի Ա

Ա.

Աշխարհագրական դիրքը. — Ժողովուրդը. — Երկրագործութիւնը. — Հանրային հարստութիւնը. — Ճարտարարուեստը. — Վաճառականութիւնը [Արտածում, ներածում]. — Հաղորդակցութեանց մամբաները. — Թղթատարութիւնը. — Գրամն ու Գրամատուներ. — Գաղթականութիւնները. — Առեւտրական նաւերը:

Մեր առաջին աշխարհագրական հատուածն Իտալիայէ պիտի չսկսէինք եթէ անիկայ, այս վերջին տարիներս, իր դրամական անձկութեան հակառակ, մրցման ելած չըլլար Եւրոպական միւս ամէնէն մեծ արտածող ազգերու հետ և մեր հրապարակին վրայ, մանաւանդ Մանիֆաթուրայի ինչ ինչ տեսակներու մէջ, Անգլիան, Գերմանիան և Ֆրանսան չգերազանցէր:

Արդէն ժամանակէ մը ի վեր տնտեսական ասպարէզին վրայ խնդիր եղած էր թէ Իտալիա կրնա՞յ և պարտի՞ ճարտարարուեստական երկիր մը ըլլալ: Եթէ աչքէ անցընենք ստորեւ նշանակուած թիւերը, որք իր առեւտրական վիճակը կը պարզեն, պիտի համոզուինք թէ Իտալիա լուծած է այս հարց, փայլունապէս ապացուցանելով որ վաճառականութեան համար իր երկրին ունեցած ամենայարմար դիրքով, իր հանքային շահագործելի հարստութեամբ և բանողչէքի աթնութեան հետ միլիոնաւոր ձիու ոյժ ունեցող ջրաչարժ մեքենաներու զօրութեամբ քիչ տեսնէն պիտի կրնայ ճարտարարուեստական առաջնակարգ երկիր մը ըլլալ:

Դիրքը. — Բնութիւնը կարծես թէ յատկապէս վաճառականութեան համար պատրաստած է Իտալիոյ դիրքը: Եթէ Եւրոպայի քարտէսը ձեռք առնենք, պիտի տեսնենք

որ Միջերկրականի մէջ մոյկի մը ձեւով երկնցած է, չորս դին ծով, միայն հիւսիսէն 1938 քիլոմէթր տարածութեամբ մաս մը կցելով Եւրոպայի ամէնէն վաճառաշահ երկիրներուն, Գաղղիոյ, Զուիցերիոյ և Աւստրիոյ: Իտալիա բազմաթիւ նաւարկելի դետեր ունի, ինչպէս Բօ՝ [670 քիլմ. երկայն], Թիպէր [390], Սանօ [230], Բիալէ [213], Պրիէնթա [174], Թալիամէնթօ [165] եւ այլն, որք բնութեան շինած ձրի երկաթուղիներն են ի պէտս վաճառականութեան: Իտալիա կը բազկանայ համանուն թերակղզիէն և Սիկիլիա, Սարտենիա, էլլպա և 66 փոքր կղզիներէ: Երկրին տարածութիւնն է 286,650 քառ. քիլոմէտր:

Ժողովուրդը. — 1860ին բնակչաց թիւն էր 21,777,334, իսկ այժմ 31,479,217: Մէն մի քառ. քիլմ.ի 110 հոգի կ'իյնայ: Ժողովրդեան 67%ը գրեւ կարդալ չի գիտեր: Կրօնք՝ կաթոլիկ, երկրին մէջ 62,000 բողոքական կայ, 38,000 Հրեայ և 80,000ի չափ օտարազգի: Տարին միջին հաշուով 225—230 հազար ամուսնութիւն տեղի կ'ունենայ և մէկ միլիոն հարիւր հազար ծնունդ և 800,000 մահ կը պատահի:

Երկրագործութիւնը. — Երկիրը ֆիզիքական և աշխարհագրական այնպիսի հանդամանք մ'ունի, որով հոն գրէթէ ամէն տեսակ բերք կը մշակուի: Կլիման մեղմ և բարեխառն է Լոմպարտիոյ մէջ, կիզիչ՝ Բալպարիոյ և Սիկիլիոյ մէջ, մերթ տաք մերթ զով՝ Քամբանիոյ մէջ, վատառողջ՝ Թոսքանայի մէջ, անձրեւոտ՝ Բիէմօնթէի մէջ և Ալպեանց ստորոտը: Իտալիոյ հողին զմայլելի արգասաւորութեան հակառակ, երկրագործական վիճակը դեռ նոր սկսած է բարւոքիլ: Լոմպարտիոյ բերրի հողերը երեսի վրայ ձգուած էին ասկէ առաջ: Միջին և հարաւային Իտալիոյ գիւղացւոց վիճակը մանաւանդ բողոքովին անտանելի էր: Իրաց այս կացութեան պատճառներէն մին սա է որ հողին 4/5ը հարուստ կալուածատէրերու կը պատկանի որք մաս առ մաս վարձու կուտան մշակներու: Առաջինները միայն վարձքն առնելու կը նային իսկ վերջինները բողոքովին անհոգ կը մնան երբ կը տեսնեն թէ իրենց ճակտի քրտինքը հողատէրին հարստութիւնն աւելցնելու պիտի ծառայէ: Այս կացութենէն մեծապէս վնաս




սուած էր երկրագործութիւնը, բայց այժմ սկսած է զգալի բարւոքում կրել շնորհիւ նոր դրամագլուխներու, գործիքներու, երկրագործական վարժարաններու, գիւղային շարժուն դասաւանդութեանց եւայլն: Իտալիոյ հողը, ինչպէս ըսինք, շատ բերրի է: 13<sup>0</sup>/<sub>0</sub>ը անմշակելի է [լեռ, ճահիճ], 87<sup>0</sup>/<sub>0</sub>ը մշակելի [որուն 40ը՝ պարտէզ, 25ը՝ մարգագետին և արօտավայր, 16ը՝ անտառ, 6ը՝ այգեստան]: Մշակուած է 20,283,000 հեքղար. (1 հեքղար=10,000 քառ. մէթր) հող, և 5 միլիառ ֆրանքի արժէքով բերք արտադրած է:

Բերք. — Իտալիոյ գլխաւոր բերքերն են արմտիք, բրինձ, որթատունկ, ձիթենի և հարաւային երկիրներու յատուկ բոյսեր և պտուղներ: Վերջին տասն տարուան մէջ միջին հաշուով արտադրուած են հետեւեալ սպրանքները:

Տեսակ	Մշակուած 1000 հեկտար	Բերքերու 1000 հեկտարիսր	Արժէք 1000 ֆրանկ
Ցորեն	4,565	42,762	784,912
Եգիպտացորեն	1,927	24,849	274,449
Վարսակ	459	6,454	49,567
Գարի	309	2,938	26,913
Հաճար	142	1,524	16,107
Բակլայ	441	1,365	20,023
Լուբիա եւլն.	419	3,339	44,895
Բրինձ	170	5,354	68,890
Գինի	3,452	27,316	730,032
Ձիթենի	1,042	2,310	239,105
Գետնախնձոր	196	1000 կեղդիցար	7,277
Շագանակ	410	2,423	43,267
Վուշ	52	188	19,878
Կանեփ	105	715	58,126
Մխախտ	4,783	1000 ֆիթիցր.	6,166
Բժոժ	1,068	1000 ունկի	41,277
Նարինջ, ևլն.	16,668	1000 սունկ	35,554

Ա. Գ.

[Շարունակութիւնն յաջորդ սեսրով]





« Ազգային գրադարան »



NL0083828



